Արամ Արեան

Ամրարարձ

Հայպետհրատ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
указанного здесь срока

Колич. пред. выдач _____

891.99
Ч-82
Чбрик

ԱՐԱՄ-ԱՐՄԱՆ

891.99
Ա-82

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ՎԵՐԱԴԱՐՁ

II
26925
387

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1949 ԵՐԵՎԱՆ

АРАМ-АРМАН

ВОЗВРАЩЕНИЕ

(на армянском языке)

Армгиз, Ереван, 1949 г.

ՄԵԿՆՈՒՄԵՆ ԱՌԱՋ

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՃԱՄՓՈՒՆ ՎՐԱ

Անցյալս հիմա լքած, շփոթ այս քաղաքին՝
Ես կբերեմ սիրտս քեզի բա՜ց թուղթի պես,
Որպեսզի քու հույզերդ անոր վրա փռվին
Իմաստությա՛մբ ու բառերով պայծառատես։

Ես կհանձնեմ սիրտս քեզի՝ դեռ չմեկնած,
Դեռ չհասած սահմաններո՛ւդ ու կարոտիդ
Ու կգտնեմ զիս այս դարուն կոչի՛ն դիմաց՝
Ակբերուս մեջ այնքան հիա՛ցք ու երաշխիք։

Ոչ մեկ հին երգ կրնա այլևս զիս կեցընել
Այս ճամբուն վրա՝ որ կերկարի մինչև քեզի՛...
Ես անհուն եմ ու կը մեկնի՛մ տես անարգել՝
Ոչմարտության մեջեն կյանքի՛ ու հրազի...

Դուն հայրենիք մը չե՛ս միայն ինձի համար.—
Աշխա՛րհն ես դուն, ուր կձգտե՛ր մարդու հոգին
Ու ես հիմա զինված մարդու հավատքով վառ՝
Վստահիմ սիրտս՝ մարդո՛ւ հայրենիքին։

Ես քանդած եմ, ինչ որ կար հին՝ խոհերուս մեջ,
Ինչ որ հին ի՜ղձ մը դեռ ուներ ինձի տալիք...
Ես մաքուր եմ, հիմա մաքո՜ւր՝ մանուկի պես,
Վերածնված, համայնակա՜ն իմ հայրենիք...

Ա՛ռ զիս, մեծցո՜ւր քու երազիդ բարությունով,
Որ երազիդ բարությունով ըլլամ արի՛
Ու պահե երգս՝ պայքարներո՛ւդ մեջ ապահով,
Վերադարձուր իմ կորսված ե՛սս ինձի։

Այս դարուն մեջ սարսուռնե՛ր կան այնքան ուժեղ,
Հուզումնե՛ր կան, որոնք երբեք դեռ չզգացի,
Որոնք թերևս ես կրնայի դրե՛լ այստեղ
Հպարտորեն ու կորովո՛վ մը առնացի...

Տա՛ր զիս, երկի՜ր, այս մեծ դարուն հզորության,
Որ կյանքին դեմ ըլլամ պատրա՛ստ ու վարարուն
Ու թող գրկեմ հավերժացա՜ծ քու առոյգյան
Ու տարածեմ երդերս՝ բոլո՜ր աշխարհներուն։

Վերադարձի այս սրբազան ճամբուն վրա՝
Ես քանդած եմ ինչ որ կար հին՝ իմ անցյալես
Ու առուլդցած ապագային շունչո՛վ հիմա՝
Ես կբերեմ սի՛րտս քեզի բա՜ց թուղթի պես։

Հալեպ, 1946

ԻՆՉՊԵ՞Ս ՉԵՐԳԵՄ ՔԵԶ ՀԻՄԱ

Հայաստանցիին

Ինչպե՞ս չերգեմ քեզ հիմա, ինչպե՞ս չուզեմ, որ ըլլաս
Երակներուս մեջ շատցող խենթությունն այս սարսուռի,
Երբ կը դառնամ քեզ այսպես ամբողջացած մաս առ մաս,
Ու եղած ի՛մըս նորեն հին օրերուն պես բարի։

Կը զարմանամ, թե ինչո՞ւ չէի ճանչցած քեզ սակայն
Ու կասկածա՛ծ իսկ էի կենդանությանդ մասին,
Կը կարծեի, որ եղած ես հիշատա՛կ մը միայն,
Քա՞ղցր հիշատակ մը՝ հառնող՝ մոխիրներեն անցյալին...

Մինչ դուն ներկա՛ն ես արդեն, կյա՛նք, եռուզեռ ու ձգտում,
Շունչիդ տակ նոր՝ մեծցուցիր մեր հին երա՞զը բողբոջ
Ու դուն մեծցա՛ր հեքիաթի մը խորհուրդով անպատում...

Հիմա դիտնաս, թե ինչպե՞ս ես կը նայիմ դարերուն
Հպարտությա՛մբ..., ու հոգիս կըլլա նոր ե՛րգ մը ամբողջ՝
Երբ կը խորհիմ, թե քեզմով ունիմ դեռ հո՞ղ մը հեռուն։

Հալեպ, 1944

ԴՈՒՆ ՀԻՆ ՀՍԿԱՆ ԵՍ ԱՅՍՕՐ

Ա.

Պզտիկ էի, կհիշեմ, կուզեի որ միայն դո՛ւն
Ըլլաս խոյա՛նքն արյունիս..., ու աչքերուս մեջ ինչպե՞ս
Կգրկեի հողերուդ տարածությո՛ւնը անհուն,
Որ ի՛մըս էր ու ինձմե կըստանար փա՛յլ մը կայծիս։

Պզտիկ էի, մտածումս ամբողջ լեցո՛ւն էր քեզմով...
Կերազեի քեզ հսկան հեքիաթներո՛ւ հրաշքին
Ու զիս՝ մանուկ մը, որ դեռ պիտի մեծնա՞ր ապահով՝
Ջուրերու՛դ մոտ, ջուրերուդ որպես կարկա՛չը ուժգին։

Չէի տեսած քեզ անշուշտ, բայց գիտեի որ դուն կա՛ս,
Հեռավոր տեղ մը, նայվածքդ՝ քաղցրաժպիտ ու միշտ վե՛ր
Ու կարձակես, կփռես շուրջը խորհո՛ւրդ ու երազ։

Պզտիկ էի... բայց ի՞նչ շուտ եղավ ամեն բան ստվեր
Ու հիշատա՛կ մը հազիվ, երբ քեզ ճանչցա իրակա՛ն
Երազիդ մեջ՝ որ խեղճուկ ու հուսահա՛տ էր այնքան...

//
//

Բ.

Հիմա կապշիմ միմիայն թե դուն ի՞նչպես հայանուիյուն
Առիր հանկարծ, ապրելու այսքան անզո՛ւսպ հավատքով
Ու տիրիցիր վերջապես դալիք բոլոր օրերուն
Ու նոր երա՞զ մը բացիր, երապ մը քա՞ղցր՝ հինի՛ն քով։

Հիմա կապշիմ միմիայն՝ քիչ մը ամեն օր մեծցող
Ու կապմվող անունիդ առջև, երկի՛ր իմ հպարտ
Ու պարպված ինքնիրմե կըլլա հոգիս ամբողջ դող.
Նուչնանալու էութիյանդ մասնիկներուն հրնամանդ։

Ու տարիներ վերջ ահա ինձի այնպես կը թվի
Թե կերթամ ետ անցյալին ու քաղցրորեն հեռավո՛ր
Հրաշք մը դիս կդրկե ընտանուիյա՛մբ արևի....

Ու կխնդրեմ, որ արդեն դուն հին հոկան ես այսօր
Ու ես՝ մանո՛ւկն այդ պղտիկ, որ մտերի՛մ շունչիդ տակ,
Պիտի տանիլ կարենար երդերդ մինչև՝ հոգիանակ։

1942

ՀԱՅՐԵՆԻՔՍ

Հո՛ղ մըն է ան, հողերո՛ւն քով մեծ ու պզտիկ,
Հող մը կարմիր՝ քիչ մը տարբեր մյուս հողերեն
Ջոր չճանչցա... այդպե՛ս ուղած էին մարդիկ
Ու զայն պահած՝ ինձմե ամբողջ անգրթորեն...։

Իրմե ոչի՛նչ ես ունեցա, բացի աղվո՛ր
Երազներես, որոնք իրմո՛վ նշան ինձի,
Ու համբույրներն ու հմայքներն իր հեռավոր
Երազներո՛ւս մեջ այդ՝ դառա ու սիրեցի՛։

Իրմե հեռու, իրե՛ն համար թափառեցա...
Որքան սակայն մտածեցի իր լեռներուն
Ե՛ս ալ բերել պապերուս շո՛ւնչը հընօրյա
Ու անոմ երդս ընել դեթ դա՛շն ու վարարուն։

Հիմա արդեն ան ամրացա՛ծ է վերջնապես,
Ու կնայի ծիածանվո՛ղ իր գալիքին...
Իր կոչն հզո՛ր է այս անգամ ու ժպտերես
Ու կհանձնեմ զիս իր ույժի՛ն մտերմագին։

Հո՛ղ մըն է ան, հողերո՛ւն քով մեծ ու պզտիկ,
Հող մը կարմիր՝ քիչ մը տարբեր մյուս հողերեն.
Որուն դրկին պիտի դառնամ օր մը, մարդի՛կ,
Ու զայն ինձմե դուք չկրնա՛ք պահել նորեն։

1944

ԳԵԹ ԱՌԱՎՈՏ ՄԸ ՄԻԱՅՆ

Առավոտյան սա պահուն, պատուհանե մը ահա
Կողջունեմ դարձըդ, արև՛, թաց ու տրտո՞ւմ աչքերով
Ու կտարվիմ մտածել բոլոր անո՛նց որ հիմա՝
Հողի՛ս վրա հարազատ, կդիտեն քե՞ղ անխռով։

Կմտածեմ ես անոնց երազներո՛ւն սրբազան,
Ուր բոց ցոլքերըդ իրենց ջերմությո՞ւնը կսփռեն
Ու ոսկեբիբ աչքերո՛ւն՝ որոնք հեշտի՞վ կլսողան
Ի տես ելքիդ՝... հայրենի սեգ ու խիզախ լեռներեն։

Կմտածեմ ընդ երկար՝ քայքայումո՞վ ողբագին՝
Անոնց քեզմով բըռընկած ու բաբախող սրտերո՞ւն
Ու սրտերուն մեջ իջնող՝ երանությա՛ն ու երգին։

Կմտածեմ... ու արև՛, պրկած ջիղերս՝ ընդունայն
Կբաղձամ ե՛ս ալ ըլլալ հայրենիքիս մեջ, հեռո՞ւն,
Ու հոն մնա՞լ քեզի հետ, գեթ առավո՞տ մը միայն

1941

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒՆ

Դուք գեղեցի՜կն եք ամենեն ու կենդանի՛ն,
Ձեր մեջ իրա՛վ հուզումն է որ կփոթորկի...
Ձեր երակներն՝ հավիրժության տե՛նդը ունին
Ու ամեն ճիգ՝ ձեր շուրջ պա՜ցք մըն է երգի...

Ում հեռավոր ու անծանո՛թ հայրազատներ՝
Տարիներու վարանումեն հետո հիմա,
Ես կճանչնամ ու կսիրեմ երա՜զը ձեր
Ու կլեցվիմ անոր շունչո՛վն հոգեհմա:

Մեր անցյալի կայծանքներուն խորհո՛ւրդն եք դուք
Ու արժանի՛ վկան՝ մեր մե՛ծ ապագային...
Կանցնիք կյանքին մեջեն հպա՛ռա ու վեհաշուք
Ու կբերեք մեզի ձեր խո՛սքն արևային:

Որքա՜ն կուզեմ օր մը ե՛ս ալ ձեզի նման
Ու ձեզի հետ, հպարտորե՛ն հանիլ հեռուն
Ու ողջունել հոնկե գաղտնի՛քն հավիրժության
Ու խառնել երգս՝ կատուցումի՝ ձեր երգերուն...

1944

ԿԸ ՄՏԱԾԵՄ

Կը մտածեմ թե, Հայրենի՛ք
Վստահեցա քեզի՛ միայն
Վիշտս հզոր ու դեղեցիկ
Ու դուն երբեք չճանչցա՛ր զայն

Ու տենդերու տակ անընտել
Թափառեցա ու սիրեցի՛,
Ու որքան ալ կրդա երգել
Երգըս օտա՛ր մնաց քեզի...

Թերևս ձայնե՛ր կային ուժգին
Ջիղերուս մեջ ու հոգիիս,
Որոնք անհայտ միշտ մնացին
Ու դեռ զտնել չկրցա՛ն զիս...

Թերևս կրնար ձեռք մը բարի.
Գալ միանա՛լ իմ ձեռքերուս
Ու հայտնության ու գաղտնիքի
Բանալ ինձմե՛ն երկի՛նք մը լույս...

Թերևս քեզմովի, երկի՛ր իմ մեծ,
Պիտի հանչնալ կարենայի
Ինչ որ բախտը ձգել ուզեց՝
Ճամբաներուս դեմ տմայի...

Ու ըլլայի քեզի համար
Ամբողջ հմայք ու հիացո՛ւմ
Ու բաղմեի կամար— կամար՝
Հին փառքերո՛ւդ վրայ տրտում։

Արդեն, երկի՛ր իմ, քանիսնե՛ր
Հողիդ ծնունդն են հարազատ.
Հողիդ համար՝ երա՛զ ու սեր.
Երբ ես այստեղ քեզմի ստեղծատ։

Կմտածեմ թե ի՞նչ ունիմ.
Ի՞նչ ունեցա մինչև հիմա,
Որպես երկո՛ւնք մը մտերիմ
Որ կազմվի ու լիանա՞...

1944

ԽԱՉԲՈՒՌ

Սովետական Հայաստանին

Թեև ցանքերս տակավին հողիդ օտար են հիմա,
Բայց անոնցմե բողբոջած խաչքո՛ւռն այս փոքր ու բարի,
Դեթ ընդունե՛ ու պահե որպես խոստում ու ընծա,
Որպեսզի բերքս՝ գալիքին՝ ըլլա պայծա՛ռ ավելի։

Քեզի՝ էջե՛ն այս ուրեմն ու էջերուն մեջ պահված
Խանդաղատա՛նքը ամբողջ ու թրթռացո՛ւմը շունչին,
Քեզի՝ ո՛վ հին դարերուն դեմ կանգնող նո՛ր առեղծված,
Որ հայրենի՛քս եղար, եղար խոյա՛նքս առաջին։

Արդեն ոչի՛նչ, ալ ոչինչ կուգա ինձի անցյալես,
Բացի խորունկ հավատքեդ, որուն շունչին մեջ տակավ
Ես թարմացած կըզգամ դիս ու առույգցա՛ծ վերջնապես
Ու կժպտին նայվածքներս՝ հեռուներո՛ւդ դեմ անբավ։

Ասկե հետո պիտի իմս ըլլաս ամբողջ, ու վերադ
Իջնե արևն հեզությամբ ու օրհնությա՛մբ բեղմնավոր
Ըլլան ուլժերս՝ ջուրերուդ պես վարարուն ու առա՛տ,
Ու տարածվին հողիես հուլիներո՛ւն մեջ բոլոր։

Դիշերներուս պիտի դուն դառնաս խոստումն անսահման.
Ու տենդն ու ձայնն արյունիս ու լիությունս վաղահաս...
Պիտի խուժես ինձմե ներս կատաղության մը նման,
Որ չունենամ քեզմե զատ ոչ մեկ սարսո՛ւռ ու երազ...

Թեև ցանքերս տակավին հողիդ օտար են հիմա,
Բայց անոնցմե բողբոջած խաչքո՛ւռն այս փոքր ու բարի
Դեթ ընդունե՛ ու պահե որպես խոստում ու ընծա,
Որպեսզի բերքս՝ գալիքին՝ ըլլա պայծա՛ռ ավելի։

1911

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Խաղաղությո՛ւն, կհիշե՛ս, օրերն իմ հի՛ն մանկության.
Որոնք այնքան էին մեղմ, այնքան լեցուն քու շունչով...
Տժգույն տղան էի ես հավիտյանն հավիտյան
Ու կուզեի տենդիս տակ պահել երա՜զդ ապահով...

Որքան, ավա՜ղ, փնտռեցի քեզ կյանքին մեջ ու մարդուն
Ու դառա սերդ սակայն մշուշներո՜ւ տակ հաղիվ.
Երի կարոտս ամբողջ աղապատանք մը թաքուն
Ու եղա գոհ ես ինձմով ու շնչեցի՝ քեզ մեղմիվ...

Եղավ իմ երգս տրտում՝ զիշերներո՜ւ հովին պես
Գիշերներու հեքին չափ եղավ իմ իղձիս բարին...
Մարտուց ավիշը հողին՝ համայնակա՜ն համբույրես
Ու դողաց սիրտս՝ հեքիաթին առջև ամեն մեկ քարի.

Խաղաղությո՛ւն, կանչեցիր ու զիս տարի՛ր շարունակ
Կյանքեն հեռու, կյանքի՛ն մեջ իմ անծանոթ երազիս
Եվ ուզեցիր որ մոռնամ երբեմն աշխարհը համակ,
Մոռնամ մարդե՛ր ը բոլոր, մարդերուն մեջ նաև զի՛ս.

Թեև սրտես ու երկրեն այս բացակա՝ եղար միշտ.
Բայց ուզեցի քեզ գրկել մենության լու՜ռ շունչին տակ
Ու չընդունիլ քեզմե դուրս ոչ մեկ հաճույք, ոչ մեկ վի՛շտ
Եվ անհատնում պատրանքիդ խառնել պատրանքս բոմանդակ։

Ես ուզեցի որ բանտես վիս բնության մեջ չքնչ
Ու բանտվիս իմ մեջ դուն, որպես խորհո՞ւրդ մը պայծառ,
Ելլամ դողիդ ժամադիր՝ ամենո՛ւն հետ, ամեն տեղ
Ու մահվան մեջ. հողին տակ, դառնամ քեզի՝ հավասար

Խաղաղությո՛ւն, բայց ներե՛, եթե ալ չեմ ճանչնար քեզ
Զի դուն չկաս, չկայի՞ր անցնող բոլոր դարերուն.
Թե ես խաբված եմ միայն ու տառապած գաղտնապես
Ու մնացած անհաղորդ՝ տառապանքի՛ն գերագույն։

Տե՛ս, կյանքս ինչպե՞ս հիմա կնետեմ մե՛ծ պայքարին
Կանվի երգս տակավ իմաստությա՛մբն այս դարուն—
Աշխարհի մեկ վեցերորդ մասով կուզեմ որ հուզվին
Բոլոր մասե՛րն աշխարհի. որ հայտնվի՛ս օր մը դուն։

Խաղաղությո՛ւն, վերջնական այդ հայտնության ի խնդիր
Հա՛րկ է որ ալ փոթորկեմ ամեն երկինք, ամեն ծով
Ու հոգիես, երգերես թափեմ կրակ ու մոխիր
Ու հաշտվիմ քեզի հետ. միայն անհա՛շտ պայքարով։

1945

Ա 26925

ԿԱՆԳՆԱԾ ԵՄ ԵՍ ԱՀԱ ԽՈՀՈՒՆ...

Ձեռքերուս մեջ հիմա ամբողջ աշխարհներու ջա՛հը ունիմ,
Կանցնիմ հարուստ՝ կյանքին մեջեն, նոր բերքերու շա՛հը ունիմ
Ու դիս զինած մոլեգնությամբն ու խոյանքովն այս սղջ դարուն
Կմտածեմ թե մեծ եմ ալ ու հավերժին պա՛հը ունիմ։

Կմտածեմ թե, իմ երկի՛ր, վստահված է շողրդ ինձի,
Պայքարներուն մեջեն եկած ու հասած է դողրդ ինձի
Ու ի՞նչ փույթ թե հեռո՛ւն ես դեռ ու անհաս է հողրդ ինձի
Ես հողիդ շունչ ու կյանք տվող՝ ամենազոր բահը ունիմ...

Կանգնած եմ ես ահա խոհուն՝ տարածությա՛ն մը վրա լայն
Ու կուտակած՝ երդերուս մեջ, վերածնվո՞ղ այս առօրյա՛ն...
Ալ ինչպե՞ս ես կրնամ հինին դառնալ նորեն ու հուզե՞լ զայն,
Երբ անստույգ երազներու այնքան առատ մա՛հը ունիմ...

Արդեն, երկի՞ր իմ կառուցվող՝ ներշնչումի կի՛րք ես հիմա,
Սերունդներուն համար բոլոր՝ ստեղծարար ձի՛րք ես հիմա,
Պարզվեր ես մեծ դաղտնիքին ու հավետ բաց դի՛րք ես հիմա
Ու ես քեզմով աստվածներու ձեռքեն խլված դա՛հը ունիմ։

1945

ԾՆՆԴԱՎԱՅՐՍ

Սա կհիշեմ հիմա նորեն քաղաքն այդ հին,
Քաղա՛քն այդ հին՝ լայնատարա՜ծ իր ծովափով.
Ուր ես՝ մանուկ, ճանչցա հույզե՛րն իմ առաջին
Ու երգեցի զանոնք որպես երա՜ղ ու հով...

Երազ ու հո՜վ ըլլար ամբողջ կյանքն ալ կարծես
Որ զիս կապեց տարիներո՛վ այդ քաղաքին,
Ըլլար անհոգ ու խենթ մանո՜ւկ մը ինձի պես.
Իմ խաղերուս չափ միամիտ ու տենդագին...

Ոչ մեկ խորհուրդ կկանչեր զիս իրմե հեռու,
Ինք՝ շո՜ւնչս էր տաք ու ես՝ սահմա՛նն իր խոյանքին...
Կնայեինք հպարտությամբ մը իրարու
Ու իրարմով էինք ժպտուն ու տրտմագին։

Միայն դաշտե՛ր կային այնտեղ ու ծաղիկնե՛ր
Ու երազուն աչքերուս դեմ՝ մշո՜ւշ ու ծով...
Սիրտս՝ անհուն քաղցրության մեջ կբողբոջեր
Ու ես հարո՛ատ էի այնքան Մեծարենցով...

Գսիրեի տերևներուն կյա՛նքը դեղին
Ու շունչն աշնան՝ ամայքներո՛ւ վրա սառող...
Կարծես ինձմով կապրեր հուզո՜ւմը Տերյանին
Ու կդառնար բառերուս մեջ ավյո՛ւն ու դող...

... Երբ կհիշեմ հիմա նորեն քաղաքն այդ հին
Կխայտա շունչս թեև տենդո՛վ մը անսահման,
Բայց չեմ ուզեր վերադառնալ իր խորհուրդին.
Ու ընդունիլ իր երազնե՞ր ու առօրյան։

Միլիոններու զարկը ունի սիրտս հիմա.
Միլիոններու զարկով եմ ես մշ ապահով
Ու դա՛ն է, որ երգերուս մեջ կդրոշմեմ դա՝
Խոհուն ու նոր քաղաքներու՝ առօրյայով։

1945

ԵՐԵՎԱՆ

Իմ հին, շա՜տ հին հայրենիքիս հիմա մեկ նո՛ր քաղաքն ես դուն.
Վերածնվող մարդու ճիգեն իրար բերված հավաքն ես դուն.
Կապրիս տենդի՜ն մեջ գալիքին ու կշնչես ամենո՛ւն հետ
Ու ամենուն սիրո՜վ լցված՝ հավերժական բաժա՛կն ես դուն։

Իմ Երևա՛ն, իմ քա՜ղցր երազ, այս որքան խոր երգեր ունիս.
Ամեն վայրկյան քեզ փայփայող ու կառուցո՛ղ ձեռքեր ունիս
Ու որքան ալ բերբրդ շատնա՝ դեռ չցանված հերկե՜ր ունիս.
Սերունդներո՛ւ որպես հիացք՝ ստեղծագործ կրա՛կն ես դուն։

Ե՞րբ է եղեր կյանքդ այսպես համայնակա՜ն ու սրտաբաց
Ու նայվածքներ բարձրացեր վե՜ր ու արևներ իջեր. են ցած...
Քսաներորդ դարն է հիմա հանճարներու շունչեն սերած
Ու այդ դարուն, իմ Երևան, ալ հարազատ զավա՛կն ես դուն։

Ներկադ հիմա, գալիքին դեմ՝ հավետ բացվող դուռ է արդեն,
Միտքդ ամբողջ իր հուզումով՝ աչքերուդ մեջ հո՛ւր է արդեն.
Ինչ որ մնաց կարոտներդ՝ ձեռքերու մեջ սո՛ւր է արդեն.
Առաջ անցի՛ր, իմ Երևա՛ն... անպարտելի բանա՛կն ես դուն։

1945

ՆԱՀԱՆՋՈՂ ԴԱՐԵՐ

Խորհրդային ժողովուրդներին

Կնահանջեն դարերը հին,
Ժամանակին հնքը՝ վկա,
Հնքը՝ հոգնա՜ծ ժամանակին,
Զոր կլսեմ արդեն հիմա՛...
Ես կլսեմ արդեն մեկին՝
Միլիոններո՛ւ սրտին վրա.
Ժողովուրդնե՜ր խորհրդային.
Ձեր երակին զարկը հսկա։

Կնահանջեն դարերը հին
Ու դա՛ր նոր՝ կդրդրդա.
Թեև անզոր եմ տակավին
Ձեզ հուզելո՛ւ համար հիմա.
Թեև անզոր եմ տակավին
Այս ապստա՛մբ լարերուն վրա
Հնչեցրնել երգերես մին
Ձեր երգերո՛ւն նման հսկա...

Ժողովուրդնե՜ր հերոսական.
Ժողովուրդնե՜ր խորհրդային.
Ընդունեցեք երդրս սակայն,
Գովքը՝ այս նո՛ր բանաստեղծին
Տեսեք ինչպե՛ս ամեն կայան
Ձիս կտանի ձեր պայքարին
Ու խոյանքիս կմիանան
Ձեր ճիգերուն ուժն ու հոգին...

Տեսեք ինչպե՞ս ժողովուրդնե՛ր,
Կդառնա կյանքս անհաղթ վճիռ
Ու կպարզե դրրո՞շը ձեր՝
Հաղթանակի՞ն համար կարմիր.
Տեսեք ինչպե՞ս կպարպվի
Ներկաս՝ տրտո՞ւմ իր անցյալեն
Ու նոր ձայներ կառուցումի՝
Հեռուներեն դի՛ս կկանչեն...

Կնահանջեն դարերը հին,
Իրենց շա՞տ հին թավալումով
Ու աշխարհներ կը սասանին
Ու կդառնան արյունի ծով...
Աշխարհներո՛ւ դիմաց այդ հին.
Ձեր աշխարհն է իջեր այսօր,
Ժողովուրդնե՛ր խորհրդային,
Ձեր դարե՛րն են կանգներ հզոր։

Կնահանջեն դարերը հին
Կնահանջեն կորաքամակ
Ու կձգեն իրենց ետին
Միայն ավե՛ր ու դիակակ...
Ու կժպտի իմ Նաիրին
Հիմա այնքան, այնքա՞ն հստակ
Ինձի՛ համար ու բոլորին,
Ձեր բոլորին երկնքի՞ն տակ։

Ես կլսեմ արդեն մեկին՝
Միլիոններո՛ւ սրտին վրա,
Ժողովուրդնե՛ր խորհրդային,
Ձեր երազին զա՛րկը հսկա...
Կնահանջեն դարերը հին,
Ժամանակին հե՛քը՝ վկա,
Հեքը՝ հոգնա՞ծ ժամանակին.
Ջոր կլսեմ արդեն հիմա՛։

Հալեպ, 1945

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԳԱՁԵԼ

Աշխարհն ամբողջ՝ աչքերուս մեջ, հիմա գրկած կուգամ քեզի։
Արյունս հորդ, բռունցքս պիրկ ու սիրտս բա՜ց կուգամ քեզի։

Անցեր եմ ես ամեն ճամփով, տեսեր հազար մոլուցք ու կիրք
Ով անոնցմե վերբե՛ր առած՝ աչքերդս թա՜ց կուգամ քեզի։

Վե՛ր է ժայթքեր իմ հոգին մինչև ու տիրացե՛ր ոլորտներուն
Բայց ոլորտի՛դ համար անհաս՝ գլուխս ցա՜ծ կուգամ քեզի։

Ես պոե՛տն եմ քու գաղթական, նետած հասակ մե՛ծ դարուն հետ,
Ու այդ դարուն բրոնկումին որպես մեկ կա՜յծ կուգամ քեզի։

Ընդունե՛ զիս, երկի՛ր իմ նոր՝ իմաստությամբ ու կաթոգին —
Հոկտեմբերիդ դրոշին տակ երգդս պարզա՜ծ կուգամ քեզի։

Հալեպ, 1946

ՀԱՅՐԵՆԻ ԳԱՐՈՒՆԵՆ
ՆԵՐՍ

ՀՈՐԴԵՐ ԵՄ, ՏԵՍ...

Հորդե՞ր եմ, տես, հիմա երկի՛ր՝ այդիներուդ կանաչին պես
Ու կլսվիմ ամենուրեք՝ քու ջուրերուդ կարկաչին պես,
Հույզ եմ տվեր հովի՛դ, զովի՛դ, համայնական պայծա՛ռ մովիդ
Ու լիացեր կուրծքերու տակ՝ ապրելու խե՞նթ մարմաջին պես։

Բացեր ես զիս սրդեն կյանքին՝ երազի թե՞րթ իմ Հայաստան
Ու կտանիս երգս հեռուն, հաղթական ե՞րթ իմ Հայաստան,
Կզրահվիմ քեզմով հիմա, անխորտակ բե՛րդ իմ Հայաստան
Ու կլեցվիմ հպարտությամբ Արարատիդ կո՞ւռ լանջին պես։

Հասեր եմ ես հիմա քեզի ու կանգներ եմ հողիդ վրա,
Դուն ի՛մս ես ալ ու սերբս նոր՝ միջոցիդ մեջ կթրթռա...
Երկի՞ր, երկի՛ր, կամբողջանամ, կբազմանամ քեզմով ահա
Ու կփռվիմ աշխարհներուն՝ քու արևուդ ճաճանչի՛ն պես։

Բերեր եմ, տե՛ս, սիրտս քեզի քու ամեն մեկ շաղի՛ն համար,
Պահեր եմ տենդս բովանդակ՝ քու դաշտերուդ խաղին համար
Ու որքան ալ խեղճ թվին դեռ բառերս այս պա՛րզ տաղին համար՝
Ես հավե՞ժ եմ ու անսասան՝ քու նոր դարուդ մե՛ծ կանչին պես։

Երևան, 1946

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Ձեռքերուս մեջ, ձեռքերո՜ւս մեջն ես դուն հիմա
Հայրենի՛ հող, ու կը շնչե՜մ քեզ մոլեգին,—
Քանի՞ դարեր փշրվեցան սրտիս վրա,
Որ ես այսպես ունենամ քու ա՜փ մը փոշին։

Աչքերուս մեջ ու կուրծքի՜ս տակն ես դուն հիմա,
Սրբազա՛ն հող, ու կը գրկե՜մ քեզ լիովին,—
Քանի՞ երազ սպանեցի ես անխնա,
Որ դուն ապրիս, որ ես հասնի՞մ քու երազին։

Երգերուս մեջ ու կյանքի՜ս մեջն ես դուն հիմա,
Երազվա՛ծ հող, ու կը մեծնանք մենք միասին,—
Թող աշխարհին քարացած խի՛զճը իմանա,
Թե ես քեզմով արդեն տիրա՜ծ եմ աշխարհին։

1945

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Սոր օրերուս ե՛րգն եք կարծեք, զուլա՛լ գետեր
Ու կհոսիք՝ լուսապայծա՛ռ արևին տակ,
Երաշներուս ժա՛յթքն եք կարծեք, հպա՛ռտ լեռներ
Ու բարձրացած՝ ոլորտներո՛ւ դեմ կցնծաք։
Եկե՛ք ինձի, եկե՛ք հիմա, անո՛ւշ հովեր
Ու խառնեցե՛ք ձեր շունչին մեջ իմ շո՛նչրս տաք
Ու ծաղկեցե՛ք ամբողջությամբ, կանա՛չ հանդեր
Ու խայտացե՛ք իմ համբույրի՛ս հետ շարունակ.
Երկի՛ր, երկի՛նք ու դո՛ւք անհայտ թաքո՛ւն ուժեր
Տարե՛ք հիմա ու ցրվեցե՛ք ինս ծագե ծագ,
Թո՛ղ ես հորդիմ որպես գարո՛ն ու որպես սե՛ր.
Մայր բնության դառնամ տարե՛րքը բովանդակ.

1946

ԵՐԲ ՁԻՍ ԳՏԱՐ

Երբ զիս գտար և ուզեցիր սեղմել կուրծքիդ դեմ ուժգնորեն՝
Ես փորձեցի նոր երազով ժպտիլ, երկի՛ր իմ Նաիրի,
Բայց աչքիս մեջ հուշ կար այնքան ու մշո՛ւշ կար հին օրերեն,
Որ դուն իսկույն վի՛շտրս ճանչցար, տեսար հոգի՛ս գաղթականի...
Ու մոր մը պես, մոր մը գութով տառապեցար պահ մը երկար,
Ըսիր—շատ ես, շա՛տ ես հոգներ ու թափառեր դուրսը՝ անտուն,
Առանձնության մեջ մրսեր ես ու լացեր ես սիրո համար,—
Ու ձեռքերես բռնած տարիր զիս երգի բոլոր բարձունքներուն,
Տարիր վարար ջուրերուդ մոտ ու լեռներուդ դի՛ր կը տարիր
Ու ցույց տվիր այս լուսահորդ ստեղծագործ կյանքի ուղին,
Բացիր թեվերս հովերուդ դեմ, դաշտերո՛ւդ դեմ անծայրածիր
Ու աչքերուս տվիր կարծես հավերժությունը աշխարհին։
Ես բաղումներ տեսա առույգ, սերը կյանքին ու բնության.
Տեսա շենքեր ու կոթողներ ու սերունդնե՛ր ելած մարտի,
Անցա բոլոր ճամփաներեն ու սրտերեն համայնական
Ու նոր միայն մարդո՛ւն, մարդո՛ւն արդար վայելքը զգացի
Ու ես մեծցա, հզորացա պահու մը մեջ անհունորեն,
Պահու մը մեջ ես ապրեցա տարիներուդ կա՛մքը արի
Ու վիշտս հին, հին աշխարհին հին սրտին մեջ մոռցած ամեն՝
Նո՛ր խնդությամբ ես նոր աշխարհ մտա, երկի՛ր իմ Նաիրի...

1965

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Հայրենական դաշտե՞րն են այս՝ ստքերուս տակ,—
Կհավաքեմ բացված վարդե՞րն իմ երազիս
Ու կվազեմ, կխոյանա՞մ ես ծագե ծագ
Ու ամեն շերտ հողի՝ լույսի՞ն կբանա դիս...

Հայրենական ջուրե՞րն են այս՝ աչքերուս տակ,—
Ես կլսեմ վարարող ե՛ռը արյունիս
Ու կլեցվիմ սիրո խինդովը բովանդակ
Ու ալիքներ՝ հեռուն, կյանքի՞ն կկանչեն դիս։

Հայրենական լեռնե՞րն են այս՝ ձյուներու տակ,—
Օ՜, ես կրզդամ բյուրեղ սլա՞ցքն իմ հոգիիս
Ու ձեռքիս մեջ հազար արև ու հաղթանակ՝
Միջոցեն վեր, դարերեն վե՞ր կգտնեմ զիս...

1946

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԳԻՇԵՐԸ

Ես կուզեի գիշերն ըլլալ Հայաստանին,
Հայաստանին գիշե՞րն ըլլալ, օր մը միայն
Ու ընծայվիլ հողին, ջուրին մտերմագին
Ու աստղերով ծածկել երկի՞նքը անսահման։

Ես կուզեի սե՛րը ըլլալ մեծ անհունին
Ու ամենուն հետ զրուցե՞լ զվարթաձայն,
Ես կուզեի գիշերվան պես Հայաստանին՝
Ժպի՞տն ըլլալ օրոցքին մեջ ննջող մանկան։

Ես կուզեի գիշերն ըլլալ Հայաստանին
Ու գալ իջնել բանաստեղծի՛ն գրքին վրան
Հավերժանալ մեծ անդորրին հետ միասին
Ու երազել՝ նոր օրերուն համար վաղվան։

Ես կուզեի կո՞տը բախել ամեն տունին
Ու մտնել ներս ըսպասված նո՞ր երգի նման,—
Գիշերվան մեջ, գիշերվա՛ն հետ Հայաստանին՝
Ես կուզեի սի՞րտ մը ըլլալ համայնական։

1946

ԳԱՐՈՒՆ

Դաշտերեն դուրս հորդեր ես դուն, գարո՛ւն իմ նոր,
Ու ո՞վ կրնա՝ հիացքդ մեծ բանտել արդեն,
Տե՛ս, ելեր ես մինչև լեռները խայտանքով
Ու իջեր վար՝ ալբյուրներու հետ, ձորերեն։
Դուն անցեր ես իմ հույզերո՛ւս մեջեն բոլոր
Ու հասեր ես Նոյքին խաղաղ պայծառության
Ու գրկելե վերջ զայն կանաչ քու երազով
Փողոցներն ես եկեր, գարո՛ւն իմ նաիրյան։
Աբովյանի ծառերն ամբողջ տես, կը ժպտին
Ու քու համբույրդ կը բերեն հովերը զով,
Այգիները, այգիները Երևանին՝
Քու երգե՛րդ են, որ կը պոռթկա՛ն սաղարթներով։
Դաշտերեն դուրս ելեր ես դուն, գարո՛ւն իմ մեծ
Կը տեսնեմ խինդդդ այս տարի ես ամենուր,
Կը տեսնեմ քեզ մանուկներո՛ւ ձեռքերուն մեջ
Ու կուրծքերուն՝ աղջիկներո՛ւ թխագանգուր։
Կը գտնեմ քեզ դայլայլին հետ թռչուններուն,
Միջոցին մեջ, ու ամպերո՛ւն մեջ սպիտակ.
Դուն կը զնգաս որպես Զանգո՛ւն իմ վարարուն
Ու կը խայտաս իմ արևոտ նայվածքիս տակ։
Դուն կը բացվիս հիմա ինձի հողին փառքով.
Ցուրաքանչյուր քայլափոխիս կը շնչեմ քեզ.
Ես կը վազեմ թևերս բաց ու ապահով,

Կարծես թե դո՛ւն, դո՛ւն ես բռնած իմ ձեռքերես։
Դո՛ւն ես առած զիս դրկիդ մեջ, գարո՜ւն իմ նոր,
Ու կը տանիս զիս երազին միջեն կարծես,
Ահա տունիս ճամփան կանաչ ու ծաղկավոր
Ու կը մտնես ինձմե առաջ սենյակես ներս։
Կը մոտենաս գիրքերուս նոր դուրդուրանքին
Ու ցերեկին՝ ողջունելն վերջ այնքան քեզ,
Գարո՛ւն, կուզես որ ողջ գիշերն ալ տակավին
Շո՛ւնչդ զգամ իմ սեղանի՞ ծաղիկներես։

1947

ԱՌԱՋԻՆ ԼՈՒՅՍ

Բարի՜, բարի՜ եկար նորեն, առաջի՛ն լույս,
Սենյակիս մեջ ու բարձիս վրա՝ բարի՜ եկար.—
Արևածագին՝ քունեն ամեն արթննալուս,
Այս որքան կյանք ու ջերմություն՜ ինձի համար։

Դուն իմ նախնյաց սեգ սարերեն կուգաս ինձի
Ու կը թափիս՝ գարունի՜ պես, ոսմերես վար,
Դուն սրտերեն ու դարերե՛ն կուգաս այցի
Ու գիտեմ որ զիս չես մոռնար, զիս չես մոռնա՜ր։

Դուն արևին շուրթեն ելած ե՛րգն ես մաքուր,
Դուն չզգացված հույզ մըն ես դեռ սրտիս համար,—
Եկո՛ւր այսպես, առաջի՛ն լույս, ինձի եկո՛ւր.
Սենյակիս մեջ ու բարձիս վրա կեցի՛ր երկար։

1946

ՎԵՐՋԻՆ ԱՐՑՈՒՆՔԸ

Դարձնեդ ներս ու մայիսեդ մտա, երկի՛ր իմ Նաիրի.
Աչքերուս մեջ երկինքը ջինջ ու կանաչը ոտքերուս տակ
Ու երբ խոհուն քու լեռներուդ՝ դաղթականի սի՛րտս բացի
Հազար աղբյո՛ւր կարկաչեցին իմ ծարավիս համար անհագ...
Հազար աղբյուր կարկաչեցին ու բխեցավ սիրտս բարի
Ու հորդեցավ ափերե ափ, սրտերե սիրտ համայնական,
Լեռներուդ մեջ ես հո՛վ դարձա ու դաշտերո՛ւդ իջա այցի
Ու բաշխեցի համբույրս զով՝ հասկերուդ նո՛ր հասունության։
Լեռներուդ դեմ ու դաշտերուդ՝ աշխարհն ամբողջ ես գտնեցի,
Աշխարհն ամբողջ, վա՛ղդ մը որպես՝ ափերո՛ւս մեջ դտա ծաղկած
Ու քանի որ որբ մըն էի երեկ, երկի՛ր իմ Նաիրի,
Քու մայրական կուրծքիդ վրա իմ նոր խինդես լացի հանկարծ։
Վերջին արցունքս էր այդ սակայն, վերջին արցո՛ւնքս էր կարոտի.
Այդ արցունքով աչքերուս մեջ շողաց միայն կյանքդ պայծառ
Ու քարեդ իսկ ծիլ արձակեց երգս, երկի՛ր իմ Նաիրի,
Որպեսզի միշտ դալա՛ր մնամ դարոնները՝ փառքին համար։

1946

ՈՐՊԵՍ ՆՎԵՐ

Ի՞նչ տամ քեզի, երկիր իմ սեպ
Ի՞նչ ունիմ ես քեզի տալիք—
Ո՞վ էի, ահ գիտե՞ս երեկ
Փողոցներու մեջ աներդիկ։
— Մայթե՞ր տամ անկարեկիր
Թափառումնե՞ր աներազ,
Գիշերներու մո՞ւթը, երկի՛ր.
Որ անխնա իջավ վրաս։
Ի՞նչ տամ, ըսե՛, քեզի այնքան
Թշվառ ու ո՞րբ իմ անցյալս՝
Ծտար ժպի՞տն այն աղջկան.
Որուն կապված մնացի ես։
Քարե՞ր տամ, քարե՞ր թաց՝
Հոլքս հեռո՞ւ. հողակույտին.
Որոնց վրա շատ եմ լացած
Ու զրուցած մտերմագին։
Չհաղնցված կարո՞տս տամ.
Ճիչե՞ր տամ ափսոսանքի.
Մորքս դալո՞ւկը անսահման,
Հին աշխարհեն ի՞նչ տամ քեզի։—
Սե՛ր մը ունիմ միայն հրկեզ.
Որ պահեր եմ կյանքին համար
Ու այդ սիրով գովեր եմ քեզ
Իմ հայրենի՞ք լուսապայծառ.

Ու այդ սիրով եկեր եմ ես
Հեռուներեն գիրկդ անհուն
Ու այդ սիրով բացեր եմ. տե՛ս,

Երգրս քեզի ու ամենուն։
Ա՛ռ զայն, երկիր, տա՛ր զայն հիմա
Ու տարածե՛ որպես գարուն,
Թո՛ղ դաշտերուդ սրտին վրա
Միայն վարդեր բացվին խնդուն։
Սեր մը ունիմ, զսպրված սեր,
Ա՜հ, զորացո՛ւր զայն օրն ի բուն,
Որ ջուրերեդ բարձրանա վեր,
Լուսավորե ամեն մեկ տուն,
Լուսավորե ամեն մեկ սիրտ,
Մեկնի խիզախ բարձունքներուն,
Հասնի քու նո՜ր, նոր աշխարհիդ,
Հին աշխարհը մոռցած հեռուն։
Այդ սրբազան սերեն բացի
Ի՞նչ ունիմ ես, երկի՜ր իմ նոր,
Ի՞նչ ունիմ ես, որ վարարի,
Մեծնա շունչիդ տակ ամեն օր։
Որպես նվեր իմ անցյալես՝
Միայն սերս եմ բերեր քեզի,
Որ ալ, երկի՛ր, չհիշեմ ես
Իմ հին ցավերս գաղթականի...

• 1946

ՓՈՂՈՑՆԵՐ ՈՒ ՊԱՏԵՐ

Փողոցնե՞ր ամայի ու անտեր
Փողոցներ ու պատե՞ր անհրազ,
Ես հիմա կհիշեմ մո՛ւթը ձեր
Ու մութին մեջ՝ իմ հի՞ն առօրյան։

Ես հիմա կհիշեմ թե ինչպե՞ս
Հուսացի պատրանքի՛ մը համար
Ու սրտիս զարկի՛ն տակ առած ձեզ՝
Մնացի մեղավո՞ր ու շվար։

Ես հիմա կհիշեմ, փողոցնե՞ր
Փողոցներ ու պատե՞ր փլատակ։
Դիշերներս իմ անտուն ու անսեր
Ու արցունքս՝ որ դողա՞ց շարունակ։

Խեղճ էիք, խե՞ղճ էի նաև ես,
Ձեր ցուրտին, ձեր սովին մեջ՝ այնքան,
Ձունեի ոչ մեկ տե՛նդ երազես
Ձիս կանչող ոչ մեկ հա՛րկ սեփական։

Փողոցներ դուք անդի՛ղջ քաղաքի
Ու պատեր տուներո՛ւ ամրոփակ,
Ի՞նչ տվիք ինձի դուք որ ապրի,
Որ մեծնա՞ դեռ իմ ջինջ կուրծքիս տակ։

..Դուք արդեն հեռո՞ւ եք, շա՞տ հեռու,
Գրկին մեջ՝ փոթորկո՛տ անցյալի,—
Հասեր եմ ես խաղա՞ղ լույսերու
Ու անցեր՝ սրտերո՛վ վիթխարի...

Չիս հիմա փողոցներ նորանոր
Կկրեն, կգրկեն շարունակ
Ու պատեր, ու տուներ ամեն օր
Կժպտին՝ իմ վարա՞ր շունչիս տակ։

Փողոցներ ամայի՜ ու անտեր
Ու պատե՞ր ու պատե՞ր աներաղ։
Բանտեր եմ ես հիմա մո՛ւթը ձեր
Ու բացեր եմ իմ նո՛ր առօրյան։

Քաղաքին մեջ այս մեծ ու ծանոթ,
Դուք արդեն կորեր եք ու չկաք։
Դուք արդեն դարձեր եք հին կարոտ
Ու հինի՛ն մեջ մեռնո՜ղ հիշատակ...

1946

ՀԻՆ ԵՂԱՆԱԿ

Մոռցած էի քեզ վաղուց, իմ հին, շա՛տ հին եղանակ,
Ու չեմ գիտեր թե ինչո՞ւ անձրևին հեծքը այսօր
Արթնցուց վի՛շտրդ իմ մեջ դիշերվան թա՞ց շունչին տակ...
Ու հիշեցի անցյալին մռայլ դեմքե՛րը բոլոր,
Երազանքներս հիվանդ, թափառումնե՛րս անքուն
Տեսա ստվերքս նորեն անկյուններո՛ւ մեջ մոլոր...
Մտածեցի թե ինչպե՞ս գիս կեցուցիր օր մը դուն,
Օր մը, դիշեր մը ձմրան, տան մը դրան առջև փակ
Եվ ուղեցիր որ սեղմեմ քեզ իմ հոգնա՞ծ շրթներուն...
Անձրևին հետ, ի՛նձի հետ լացիր, լացի՛ր շարունակ
Փողոցներուն մեջ լքված եղար իմ վի՛շտրս անհուն,
Դուն հեռավոր, մեղավոր մոռացված հի՛ն եղանակ...

1946

ՀԱԼԵՊ ՔԱՂԱՔԻ ԾԱՌԵՐՈՒՆ

Ծառե՛ր, ձեր շուրջ կարոտ մը հի՞ն դեռ կը դողա
Կարոտ մը մութ՝ ինչպես դողա՛ց այդ իրիկուն.
Ծառե՛ր տրտում, դուք նորեն նույն տեղն եք հիմա
Ես եկեր եմ, հասեր կյանքի պայծա՛ռ հեռուն։

Ծառե՛ր, դիտեմ ձեր եղերած ճամփուն վրա
Նորեն մարդիկ կան անցորդ՝ ու մոլորուն..
Բայց ո՞վ, ըսե՛ք ձեր երգին տակ կուպա հիմա.
Ինչպես լայի՞ ես անցորդի՞ք՝ այդ իրիկուն։

1946

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆԿԵՐՈՋՍ

Նո՛ւյն մայթերն են հիմա նորեն ոտքերուդ տակ
Նո՛ւյն գիշերն է աչքերուդ մեջ ու քաղաքին..
Թերևս հիմա նորեն դրոան մը առջև փակ՝
Դուն կը խորհիս քու հարազա՜տ տունիդ մասին

Թերևս հիմա դուն կը շրջիս այն փողոցով,
Ուրկե հաճախ անցած էինք իրարու հետ
Ու հեռավո՜ր քու երազիդ կարոտը ծով՝
Որպես սրցունք կը կախվի վար թարթիչներեդ

Թերևս հիմա նետեր ես դուն սիրտդ նորեն
Բաժակի՛ն մեջ, բաժակի՛ն մեջ դարեջուրի
Ու կուզես որ նո՜ր աշխարհներ քեզ օրորեն
Ու գինետունն ամբողջ քեզմով թնդա՛, ահի

Թերևս հիմա դուն կը հիշես սերդ խոով՝
Մշուշներու՜ն ու օրերո՜ւն միջեն հեռու
Ու կը հասնիս ծանոթ, ծանոթ սեղանին քով
Կը վարանիս քու նոր երգերդդ դրելու

Թերևս հիմա դուն հիվա՜նդ ես ու անոթի
Ու ձեռքիդ մեջ քեզ զղացող ձե՜ռք մը չունիս.
Թերևս հիմա կարոտ խոսքի ու շոյանքի՝
Հին փողոցի՜ մը անկյունեն կը կանչե՛ս դիս

...Նո՛ւյն մայթերն են հիմա նորեն ոտքերուդ տակ
Նո՛ւյն գիշերն է աչքերուդ մեջ ու քաղաքին
Ու կը թվի, որ իմ անցյա՛լս բովանդակ՝
Կապրի հիմա քու ներկայի՛դ հետ միասին։

Ու կը թվի, որ քաղաքի՛ն մեջ այդ պզտիկ՝
Իմ հին վի՛շտս է, որ կը մեծնա տաժանորեն
Ու անգո՛ւթ են, ու անգո՛ւթ են նորեն մարդիկ
Ու արցունքիդ մեջեն հիմա զի՛ս կը ծաղրեն։

Սակայն ըսե՛, հեռո՛ւ ընկեր, ըսե՛ անոնց,
Որ ես անմախ երկներ եմ իմ երգրս արդեն
Ու կողչունեմ նոր աշխարհին տեսի՛լքը բոց՝
Մասիսներու հավերժակա՛ն բարձունքներեն։

Ըսե՛ անոնց, որ իմ նախնյաց հողին՝ վրա
Կանգնած եմ ես միլիոններով ու ցնծագին
Ու ապագան, քո՛ւ ապագադ քովս է հիմա
Ու կրսպասն քու հայրենի՛ր վերադարձին...

1947

ՊԱՏԳԱՄԸ

Ապագա սոդու

Երբեմն ինձի կը թվի որ դուն ծնա՞ծ ես արդեն
Ու կը շնչես, կը մեծնա՞ս գուրգուրանքով այս հողին
Ու ես բռնած եմ ամուր՝ քու մանկական ձեռքերեն
Ու կը քալենք քովիքով ու կը խոսինք միասին։—

«Սիրե՛, կըսեմ ես քեզի՝ վազող ջուրե՞րն այս վարար.
Այս լեռնաշխա՛րհը խոհուն ու այս գարո՛նը վճիտ
Նայե՛, կըսեմ, թե ինչպես բողբոջե՛ր է ամեն ծառ
Ու արեգակը վերեն իջեր, հասե՞ր է աչքիդ։

Գիտե՞ս, կըսեմ, թե որքան ես տառապեր եմ անտեր.
Ես թափառեր եմ հեռուն, լավ գալիքի՛ մը համար
Ու իմ վարդերդս ամբողջ արցունքներես են բացվեր
Ու արցունքիս փա՛յլն ես դուն այս երկնքին տակ արդար

Գիտե՞ս, կըսեմ, ես հետո՝ գիտե՞ս, պզտի՞կ իմ տղաս.
Թե արմատներդ հողին հարկ է խրել ապահով,
Այս դաշտերուն մեջ ձգել քու մանկությո՞ւնդ երազ
Ու բարձունքի՛ն սլանալ դարուն ազատ խոյանքով։

Չավա՛կն ես դուն, կըսեմ ես, ժամանակին մեր անկանգ.
Պիտի օրերն այս ափիդ մեջ լիանա՞ն ու հորդին,
Այս լեռներո՛ւն պիտի ձայնդ ըլլա անսուտ արձագանգ,
Ու բալերուդ տակ խիզախ՝ թնդա՛. ցնծա նաիրին։

Դուն նոր աշխարհն ես տեսեր, կըսեմ, աշխարհն այս խնդուն
Հին աշխարհեն ոչ մեկ հուշ կա նայվածքիդ մեջ արդեն,
Սովետական դուն մանո՛ւկ, դուն երջանի՛կ մանկութիւն
Ելե՛ քու բախտդ հիմա շուրջդ ծաղկոց գարունեն։

Տե՛ս, չի շարժիր, չի դավեր ոտքերուդ տակ ոչ մեկ քար։
Ու փոշիները անգամ ունին շոյա՜նք ու ժպիտ...
Սիրե՛, կըսեմ, ես քեզի՝ կյանքին տեսի՛լքը պայծառ
Ու վազքիդ մեջ մի՛ մոռնար սակայն պատգա՛մը երկրիդ։

Երբեմն ինձի կը թվի որ, դուն ծնա՜ծ ես այսպես
Ու կը քալենք քովե քով ու կը խոսինք միասին,
Ու դեռ մատղաշ, դեռ անմեղ քու ձեռքերեդ բռնած ես,
Կը տանիմ սի՛ռտրդ ամբողջ՝ վերածնվա՜ծ մեր հողին։

1947

ԵՐԵՎԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Կանցնիմ հպարտ ես նորեն Ստալինյան փողոցով,
Ղեկավարին ո՛ւժն ամբողջ՝ ջիղերուս մեջ կուտակած.
Շուրջս շենքեր ու մայթեր կը փոթորկին որպես ծո՛վ
Ու կը մեծնան հեռավոր տարածությա՛ն մը դիմաց։

Երևանին մեջ հիմա փողոցնե՛ր կան անհամար,
Արձաններ կան լուսավոր՝ Երևանի՛ն մեջ հիմա,—
Հոս Թումանյա՛նն է արդեն, իր երազո՛վը պայծառ,
Հոն՝ Աբովյանը իր նոր գրքի՛ն համար կը խոկա։

Ահա Տերյա՛նը խոհուն ու Շահումյանը ըմբո՛ստ
Ու փողոցնե՛ր, փողոցներ հանճարանիստ ու հսկա.
Քիչ մը անդին Լենինի հրապարա՛կն է ամբողջ,
Հեռուն հերոս մը ինձի թելերն իր լայն կրանա։

Դեռ փողոցներ կան շքեղ, դեռ արձաննե՛ր կան այնքա՛ն,
Հեռուներուն դեմ բացվող, հայանվոյ նո՛ր հոգիներ,
Ամեն մեկո՛ւն հետ երկերս մտերմորեն կը զրոյան,
Ամեն մեկուն հետ կարծես ես շնչեր եմ, ես մեծցե՛ր։

Ահա փողոց մըն ալ նոր, որ պիտի լայն տարածվի
Բաղրամյանի ռազմական տեսիլքի՛ն հետ միասին.
Պիտի գրկի Երևանն իր ծառերովը շուրջի
Ու արժանի ընե զայն ի՛ր Հաղթակա՛ն Կամարին։

Կանցնիմ հպարտ ես նորեն Ստալինյան փողոցով,
Ղեկավարին ո՛ւժն ամբողջ՝ ջիղերուս մեջ է ահա...
Երևանին մեջ որքան փողոցնե՛ր կան ապահով,
Օ՜, Երևանը, տեսե՛ք, հանճարներո՛վ կը թնդա։

1946

ԼԵՆԻՆԻ ԱՐՁԱՆԻՆ ԱՌՋԵՎ

Լենինը կարծեք ո՞ղջ է տակավին,
Լենինը կարծեք կիսոսի՛ անգամ —
Երևանի մե՞ծ հրապարակին
Վրրա Լենինը դարձեր է պատգա՛մ։

Նայեցե՛ք իրեն, կքալե՞ ահա,
Կքալե՞ ազատ՝ հավերժի՞ն ճամփով.
Միջոցը իր շուրջ կպայծառանա
Ու լույսեր՝ վերեն, կվազեն իր քով։

Դա՛ըր խստաշունչ՝ իր ոտքերուն տակ,
Որպես պատվանդան կանգնած է ունիթեր
Ու տիեզերքին տենդը բովանդակ՝
Իր մատներուն մեջ դի՞րք մըն է կարծեր։

Լենինը, մարդի՛կ, ձեր հուզեռին
Ու երթին մեջեն կը ժպտի՞ ահա...
Լենինը հուզվող մի՞տք է տակավին.
Ու կյանքին համար՝ պայքա՛ր կմնա։

Լենինը կարծեք ո՞ղջ է տակավին,
Լենինը կարծեք կիսո՛սի անգամ—
Երևանի մե՞ծ հրապարակին
Վրրա Լենինը դարձեր է պատգա՛մ

1946

ՔԱՆԴՎՈՂ ՀԻՆ ՏԱՆ ՄԸ ԱՌՋԵՎ

Ինչպե՞ս մտնեմ դռնեդ հիմա, համախորշակ ու ավերս տունս.
Ինչպե՞ս բանամ անցյալդ հին, կանչեմ կորած դարերը ե՛ս...
Ահմիդ վրա կեցեր եմ, տես, շփոթահա՞ր ու խռովուն
Ու իմ նախնի՛ք կարծես ամբողջ ձիս կը դիտեն քու պատերդ.

Կարծես ուխտի եմ եկած ես Նաիրյան հի՞ն դամբարանին
Ու կը կարդամ քարերուդ վրա տապանագիր մը արյունոտ...
Ու կը խորհիմ բոլոր անոնց, որոնք անվերջ երազեցին
Ու մահացան օր մը այստեղ՝ չտեսած խի՞նդ ու առավոտ

Ես կը խորհիմ հայ մամիկին, որուն բառերը շարունակ
Աղո՞թք դարձան ու ելան վեր, ձեղունեդ վեր՝ պաղատանքով
Ես կը խորհիմ հայ ոլբերուն, որոնք լացի՞ն քու մութիդ տակ
Ու աստծո սիրտը սոսկալն մնաց անզիջող ու անվրդով.

Ես կը խորհիմ, տո՛ն, այն մարդուն, որ բարձրացուց քեզ հողեն վեր
Ու մարդերուն, որոնք հետո քու կարոտովդ տառապեցան.
Քանի՞ սերունդ ու քանի դար ճակատագրիդ կանգնեցան տեր
Ու քանինե՞ր բերին բկի իրենց անե՛ծքը սնահման:

Ինչո՞ւ պահել, տուն, քեզ հիմա որպես ավա՞նդ հին անցյալին
Երբ մեր հերկան այնքան հարուստ է կերտվող իր գալիքով,
Ինչո՞ւ պահել, երբ փառքե՞ր կան շուրջդ խիզախ ու ամրաշին
Ու կոթողնե՞ր կան դեղեցիկ ու արշավնե՞ր կան ապահով։

Տուն, մենք հիմա չենք հավատար խաբկանքներուն ու երկնքին
Աստվածները մեր չեն դողար ալ ու չեն բայվիր աղոթելու,
Չենք հավատար քու պատերուդ, որոնք սրտե՞ր բանտարկեցին
Ու սոսրյադ մեծ պայքարեն մնաց անմաս, մնաց հեռու։

Չենք ուզեր մենք տառապանքովդ ու երազովդ սնվիլ կրկին
Ու ոնեանալ քու քարերուդ փոշին, փոշի՞ն իսկ հիշատակ...
Դուն մեր այս նոր աշխարհին մեջ արդեն մեռնող աշխա՞րհն ես հին
Վերջին մշո՞ւշն ես կորսվող սովետական արևին տակ։

Ինչպե՞ս մոռնամ դանեդ հիմա, համախորշակ ու ավեր տո՛ւն.
Ինչպե՞ս բանամ անցյալդ հին, կանչեմ կորած դարերը ե՛տ...
Սեմիդ վրա կեցեր եմ, տես, շփոթահա՞ր ու խռովուն
Ու իմ նախնիքս կարծես ամբողջ գիս կը դիտեն քու պատերեդ։

1941

ՓՈՐԵ՛, ԸՆԿԵՐ

Նվիրված հայ բանվորին
իր տան շինության առթիվ

Փորե՛, ընկեր, ընդերքներն համայնակա՞ն այս հողին
Ու թո՛ղ քրտինքդ հոսի օրհնության պես ճակտիդ վար։
Տե՛ս, քարե՞ր են այս քեզի հետ մտերմորեն կիսոսին
Ու կշնչեն քեզի պես՝ խաղաղ սիրո՛ մը համար։

Փորե՛ վստահ ու դիտցիր, որ կյանքը քո՛ւկդ է այլևս,
Թե վայն կըրնաս պիտի դուն բանտել շունչիդ մեջ հսկա
Ու տարածե բազուկիդ հրաշալի՞ քն ամբորեն՝
Այս ափերո՛ւն ու սրտիս ու դարերո՛ւն սրտին վրա։

Փորե՛, ընկեր, երազով ու հավատքո՛վ փորե դուն
Ու դի՛ր տունիդ ու կյանքին, կյանքիդ հիմքե՛ր ը հիմա։
Ըրե՛ պատերը հաստատ, ըրե դալիքը բեղո՛ւն,
Ըրե՛ այնպես՝ որ սլայքարն այս անսա՞ստ չըմնա։

Մի՛ նայիր ետ... ահ, անոնք տունե՛ր եկան տարագիր
Տուներ եղան՝ աքսորի ճամփաներո՛ւ վրայ լուռ։
Որոնց որքան ալ երազդ օր մը բաշխե՛ ուզեցի՛ր
Եղան ջիղերդ տնդո՛ւր, անցան ճիգերդ իզո՛ւր։

Ոչ մեկ հիացք, ոչ մեկ սեր ուներ քու կյանքդդ. գիտե
Կառուցելու տենդին մեջ սիրտդ մաշա՛ծ էր միայն
Ու դուն, բանվո՛ր իմ ընկեր, անձրևներուն, բուքին դեմ
Ուրիշներո՛ւն համար միշտ կուրծքդ բացա՞ծ էիր յայն։

Ուրիշներուն համար մի՛ շտապ... ու լսեցեար գան երբեք
Քու կառուցած տուներդդ տո՛ն մը, որ քովիդդ ըլլար.
Լեցվեր կյանքով ու երգով, պահեր տեսի՛լքդդ իր մեջ
Ու օրերուդ վրա գալիք բանար երկի՛նք մը պայծառ։

Մի՛ նայիր հետ ու փորձ հանառարեն, ուժգնորեն.
Ծորե՛ հիմա, աչքերուդ՝ տան մը դորո՛ն ապահով.
Ել ո՞վ կրնա բաժնել քեզ այս սրբազան հավատքեն
Որ աշխարհին դեմ ահա վարարեր է որպես ծո՛վ...

Կյանքին համար՝ վստահե՛ երազդ ամբողջ, քարերու մեջ
Ու անցյալին դեմ ցրցի՛ հավերժացա՛ծ քու ներկան,
Սիրտդդ՝ երգի՛ն՝ մեջեն այս, նետի հեռուն, շատ հեռուն
Ու գիտցի՛ր որ մեր ճիգով մեծցող հույսե՛ր կան այնքան։

Ծորե՛, ընկեր, ընդերքներն հայրենակա՛ն այս հողին
Ու թո՛ղ քրտինքդդ հոսի օրհնության պես ճակտեդ վար.
Տե՛ս, քարե՛ր են այս քեզի հետ մտերմորեն կիսոսին
Ու կշնչեն քեզի պես՝ խաղաղ սիրո՛ մը համար։

1946

ԱՌԱՎՈՏՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ինձի համար մտերիմ եք բոլորդ ալ դուք.
Առավոտնե՛ր, ըլլաք խաղա՞ղ թե փոթորկոտ.
Բերեք գարնան բեղուն անձրև, թե ձմռան բուք.
Եվ կամ երա՞ղ մը աշունի, բերեք կարո՛ւ։
Հարազատ եք ինձի համար բոլորդ ալ դուք,
Նույն պա՛հը կա ձեր մեջ, նույն շո՞ւնչը կենդանի
Ով աչքերուս ունենամ խինդ թե արտասուք՝
Որ սիրե՛մ ձեզ, առավոտնե՛ր Հայաստանի։

Առավոտնե՛ր, այցելունե՛ր եք դուք խոհուն,
Այլուրներեն եկող անխաբ այցելուներ,
Դուք կը բերեք կյանքը՝ մեկնո՞ղ գիշերներուն.
Ձեր մեջ ունիք դիշերներեն պատգամ մը դեռ.
Գիշերներեն վերջ դուք խոհե՞ր ունիք բազում.
Ցերեկներեն առաջ կոչե՛ր ունիք արի,
Ունիք դաղար, և ջիղերու ուժեղ լարում,
Ունիք խոյա՞նք. առավոտնե՛ր Հայաստանի։

Ու դուք կուգաք, առավոտնե՛ր, կուգաք կարծեք
Սերերեն նոր ու հունձքերե՞ն լեռնակուտակ.
Հին անցյալեն ու գալիքեն խիզախ ու սեգ,
Կուգաք կյանքեն համայնաշունչ, հոգե՛ն կուգաք
Ու կը խուժեք. առավոտնե՛ր, հոգիես ներս,
Ո՛ըլլաք իմա՛սա ու հիացո՞ւմ կըլլաք գաղտնի
Ու արձակվող ներշնչումի մը թափի՞ն պես
Ո՛ըլլաք ամդո՞ւսդ, առավոտնե՛ր Հայաստանի։

Դուք չէի՞ք որ, առավոտնե՛ր, դիս կանչեցիք
Ու կապեցիք այս աշխարհին ու այս դարուն,
Դուք չէի՞ք որ բացիք իմ Նո՛ղքըս գեղեցիկ,
Աբովյանի ծառերուն հետ բերիք զիս տուն...
Ու ես չէի՞, որ այդ օրեն, որպես փյունիկ.
Վեր սլացա՝ մոխիրներեն իմ անցյալի,—
Որ կտակեմ առաջին երգըս երջանիկ՝
Ձեզի՞ միայն, առավոտներ Հայաստանի։

Առավոտնե՛ր, ըլլաք խաղաղ, թե փոթորկոտ,
Բերեք գարնան բեղուն անձրև, թե ձմրան բուք
Եվ կամ երա՞զ մը աշունի, բերեք կարո՛ղ՝
Նո՛ւյն արևն է, որ կը կրեք, կը տանիք դուք.
Նո՛ւյն արևն է, որ կը դառնա ինձի շնչոր՝
Երբ դուք այս հին հորիզոնեն կելլեք մարտի,
Նույն արևով ենք մենք հիմա անպա՛ռտ ու նոր,
Առավոտնե՛ր, առավոտնե՛ր Հայաստանի։

1947

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՐԶՅԱՆԻՆ ՀԵՏ

Ա.

Դուն ինձի՛ հետ տառապեցար, պսե՛տ ընկեր,
Արևելքի քաղաքներուն մեջ խեղճ ու հին
Ու մեռցուցիր քու մեջ այնքան երա՛զ ու սեր
Ու նայեցար կարծես վախո՛վ այս աշխարհին։

Որքա՛ն ատեն դուն շրջեցար, հեռո՛ւ, հեռո՛։
Ափերուն վրա՝ արաբակա՛ն անապատին
Ու երգեցիր հազար ու մեկ գիշերներու
Գինովությամբ՝ ֆելլահներու մե՛ղկ յայլային*։

Հնության դեմ եղար պայծա՛ռ, պայծա՛ռ մանուկ
Ու սիրեցիր կյանքը որպես մշո՛ւշ ու հով
Ու վազեցիր աշուններու գի՛րկը տամուկ
Ու ձեռնունայն անցար՝ հարո՛ւստ այս աշխարհով։

Քանի՞ անգամ անծանոթ սեր մը քու սրտին,
Դուն համեցար մայթերուն վրա, սյունի՛ մը քով
Ու անցորդներ քեզ չճանչցան, զգինո՛վ ըսին
Ու ձգեցին, որ քնանա՛ս յալեյլիով...

---

* Արաբական թախծոտ երգ՝ գիշերվա և սիրո մասին։

Բ.

Մենք միասին մեծցանք, ընկե՛ր, ու բախտը նո՛ւյն
Մեր նայվածքները հորդեցուց կյանքո՛վ, տենդո՛վ...
Ու դուն կարծես մոռցար քու հին երգդ ժժդուն
Ու զգացիր քու մեջ հաղար երկի՛ր ու ծով։

Ու միասին մենք երգեցինք, հեռո՛ւ, հեռո՛ւ
Համայքին դեմ՝ արաբակա՛ն անապատին.
Փոխան մաշած ու հնավա՛նդ թախիծներու՝
Դարերուն խի՛նդն ու մեր նոր ե՛րգը տենդադին։

Ու օր մըն ալ մենք միասին, պոե՛տ ընկեր,
Վերադարձանք հայրենական մեր լեռներուն
Ու բացվեցան քու շուրջ լույսե՛ր ու երկինքնե՛ր
Ու դրկեցիր կյանքը՝ շունչի՛դ մեջ վարարուն։

Ամեն բողբոջ, հող ժպտեցավ քեզ սիրազեղ
Ու աղբյուրներ կարկաչեցին քու սրտիդ քով.
Որ մենք, ընկե՛ր, շնչենք աղատ ու միատեղ
Ու մեր հարուստ զգանք, հարո՛ւստ մեր երկրով։

Տե՛ս, դուն արդեն բացվեր ես նո՛ր, նո՛ր երգերու
Ու կմնծնաս հողի՛ն, քարի՛ն հետ միասին
Ու մեր հին կյանքը կնետես հեռո՛ւ, հեռո՛ւ
Փոշիին մեջ՝ արաբակա՛ն անապատին...

1946

ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Մոմե՛ր, մոմե՛ր, տարիներուս թիվին չափ,
Շիթ մը արցունք, որպես վերհո՛ւշ անցյալեն,
Քանի մը թերթ՝ կարոտներեն գունաթափ
Ու մե՛ծ սերեր, որոնք հույսո՛վ կշնչեն...

Սեղանիս վրա՝ իմաստությո՛ւն մը պայծառ,
Սեղանիս վրա՝ գիրքերու նո՛ր ջերմություն,
Հոգիիս մեջ, հոգիիս մեջ՝ տոնածա՛ռ
Եւ օջախեն ծավալող լո՛ւյր մը անհուն։

Կյանքին համար՝ աճող հիա՛ցք ու երազ,
Բաժակիս դեմ՝ որքան բաժակ, արբեցո՛ւմ...
Մորա աչքերուն՝ խաղաղությո՛ւն մը անհաս,
Դուրսը՝ անձրև, դուրսը՝ որո՛տ սենդագրում։

Մանկությենեն սպասված նոր, նո՛ր տարի,
Ձյունե մաքո՛ւր, ձյունե մաքո՛ւր հուզաշխարհ,
Առաջին այց ու լիությո՛ւն հայրենի՝
Իմ սենյակես ու հոգիես ներս խոնարհ...

1946

ԶՅՈՒՆ

Զյո՛ւն, կը հիշե՞ս ձմեռն այդ մութ ու արնաներկ,
Երբ սարսա՛փն էր իջած խաղա՞ղ մեր դաշտերուն
Ու հասկերու մըրա հսկող ամեն մեկ ձեռք՝
Զե՛նք էր գրկած ու մեկնա՞ծ էր կռվի հեռուն։
Զյո՛ւն, կը հիշե՞ս թե որքան դա՞ռն էր այդ տարի
Նո՞ւնչը մահվան ու փոթորիկը լեռներո՞ւն,
Ամեն կայծակ կիջներ թափով մը վիթխարի
Ու մոխրացող կյա՞նք մը ուներ ամեն մեկ տուն։
Մոլեգնած էր թշնամին հին իր մոլուցքով
Ու կոռնայիր թշնամիին պես նաև դո՛ւն,
Յո՞ւրտ էր այնքան ու ամեն տեղ՝ ավե՞ր ու սով
Ու սառած էր աշխարհին դեմ խի՛ղճը մարդուն...
Զյո՛ւն, կը հիշե՞ս թե քանի բոց, երա՞զ աչքեր
Մթագնեցիր ու փակեցիր սարսռուած տակ
Ու լեռնացար, դարձար դաժա՛ն դուն այդ ձմեռ
Ու պարեցիր դիակներո՛ւ հետ շարունակ։
Զյո՛ւն, կը հիշե՞ս թե քանինե՞ր եղան անհետ
Որ ձմեռները դալիքին ըլլան պայծառ
Ու թշնամին չը կարենա օր մը դալ ետ
Ու չը կոտրե պարտեղներեն մեր ոչ մեկ ծառ,
Որ դուն խինդով, միայն խինդո՛վ իջնես այսպես,
Ծածկես ծառերն ու տարածվի՞ս լեռներեն վար
Ու մանուկներ առանց վախի փայփայեն քեզ
Ու դուն ժպտիս անոնց խաղա՞ղ կյանքին համար։
... Զյո՛ւն, քա՞ղցր ձյուն, իջի՛ր հիմա դուրգուրանքով,
Իջի՛ր թեթև՝ համբույրի՞ պես մեր սրտերուն,
Տե՛ս, կը ժպտին երազն ու կյանքն իրարու քով
Ու էջքդ քու հավատք ու սե՞ր կուտա մարդուն։

Զյո՛ւն, դաշտերու խաղաղության վրա բարի
Արդեն փուված մաքուր ու նո՞ր զրույց ես դուն,
Տե՛ս, մեր ձմեռը լիառա՞տ է այս տարի
Ու կը տաքնա օջախին շուրջ ամեն մեկ տուն։
Իջի՛ր հիմա, իջի՛ր հանդարտ, իջի՛ր անքեն
Ու բե՞ր մանկան օրորոցին հանդի՛ստ ու քուն,
Հորդի՛ առատ երդիքներեն ու սրտերեն,
Եղի՛ր խայտանքն իմ հայրենի՞ ձմեռներուն։
Զյո՛ւն, ձյո՛ւն, հիմա ես կը խորհիմ բոլոր անոնց,
Որոնք դացին այս նոր եկող կյանքին համար,
Դացին մահվան, սրտերնին՝ խինդ, աչքերնին՝ բոց,
Որ մենք ապրինք, որ դուն դառնա՞ս այսպես անչարի
Ես կը խորհիմ հիմա տրտո՞ւմ այդ ձմեռվան,
Մեր ճիգերուն, ապրելու մե՞ծ մեր կարոտին,
Զյո՛ւն, կը խորհիմ հաղթանակի՞ն մեր վերջնական
Ու օրերո՛ւն, որոնք դեռ նո՞ր պիտի բացվին։

1947

ՄՈՍԿՎԱ

Դեռ չեմ տեսած ես քեզ թեև ու չեմ մտած Կրեմլեդ ներս,
Սակայն, Մոսկվա՛, հասել եմ քու մեծցուցած նո՛ր Երևանին,
Եկեր եմ ես կամքով արի՝ նոր աշխարհիդ ափերը պերճ
Ու նախիրյան իմ երկիրեն քեզ կողջունե՛մ մտերմագին։
Ո՞վ էի ես մինչև երեկ,—նայվածքներու՛ մեջ աներազ՝
Կինտռեի բախտիս համար իմ արցունքիս շի՛թը անհուն,
Հին աշխարհին շրթներուն վրա ե՛րդ մրն էի միայն մեռած,
Այսօր արդեն աշխարհը ինը, ե՛րդ է դարձեր իմ շրթներուն։
Դո՛ւն էիր որ ինձի տվիր հայրենիքիս դաշտե՛րը խաս
Եվ ուղեցիր որ վարդերեդ քաղեմ հազար հո՛ւյզ ու բուրում
Ու Կրեմլեդ մեծախորհուրդ մինչև Մասիսն ու Արագած՝
Ամեն մեկ աստղ շողաց կարծես խինդի՛ն համար իմ օրերուն։
Մոսկվա՛, հիմա դուն ի՛մս ես ալ ու ես ժառանգն եմ գալիքին,
Կանցնիմ արդեն քու աստղերեդ լուսավորված ճամփաներով
Ու թեև քեզ դեռ չեմ տեսած, բայց կը շնչե՛մ քեզ լիովին՝
Իմ հարազատ Նորքի՛ն մեջեն ու հովերուն մեջեն իր զով։
Մոսկվա՛, դուն նոր կյանք ես տվեր հազար ու մեկ քաղաքներուն,
Հազար ու մեկ քաղաքներուն մեջ փոթորկող սե՛րդ կա ծով
Ու կկանչես սրտերն անվերջ քու երազիդ պայծա՛ռ հեռուն,
Որ լավագույն ե՛րգը իրենց այս մեծ դարո՛ւն հանձնեն փառքով։
Պիտի մտնեմ օր մը, Մոսկվա՛, սահմաններեդ ներս ժպտագին,
Պիտի մտնեմ, բացած թևերս՝ հաղթանակի՛դ հավերժության,
Աղբյուրներեն իմ հայրենի պիտի հասնիմ մե՛ծ ակունքին,
Պիտի հասնիմ քու դաշտերուդ ու դաշտերեդ համայնական
Պիտի ելնեմ մինչև լեռներդ, մինչև երկի՛նք, մինչև եթե՛ր,
Պիտի սուրամ սմպրոպներեն, կայծակներեն վե՛ր ու անդին
Ու երգես լո՛ւյս ըրած, Մոսկվա՛, զոհաբերո՛ւմ ըրած անմեռ՝
Քու Կրեմլիդ աստղահույլեն պիտի ցրվեմ ո՛ղջ աշխարհին...

Երևան, 1947

ՎԱՂՎԱՆ ՀԱՄԱՐ

Ես կխորհիմ աշխարհի՛ն, որ պիտի գա՝ ծանրաբեռ
Ու հնչեցնե ինձմէ ներս իր ստնաձա՛յնը հսկա,—
Ես կխորհիմ դիրքերո՛ւն, որոնք գրե՛մ պիտի դեռ
Ու տամ մարդոց ու կյանքին՝ ինչպես այս գի՛րքը հիմա։

Օրե՛ր հեռու ու պայծառ, ահա արդեն կը շնչեմ
Ու կը քալեմ հաղթական՝ ձեր վերելքի՝ ճամփուն վրա.
Ու կը թվի որ տակավ ձեզ կունենա՛մ ձեռքիս դեմ
Ու կը թերթեմ թերթ առ թերթ՝ ինչպես այս գի՛րքը հիմա։

Գալիքը ի՛մս է ամբողջ, ես գալիքի՛նն եմ արդեն,
Ներկաս տեսե՛ք, կը դեղնի ու հիշատա՛կ կը դառնա,
Քիչ մը երա՛զ միմիայն ու քիչ մը տե՛նդ այս դարեն
Պահած իր մեջ՝ ինչպես այս գի՛րքը, այս գի՛րքը հիմա։

Երևան, 1946

ՑԱՆԿ

Մեկնումեն առաջ

Վերադարձի ճամփուն վրա 5
Ինչպես չերգեմ քեզ հիմա 7
Դուն հին հսկան ես այսօր 8
Հայրենիքս 10
Դեռ առավոտ մը միայն 11
Հայաստանի բանաստեղծներուն 12
Կը մտածեմ 13
Խաչքուռ 15
Խաղաղություն 16
Կանգնած եմ ես ահա խոհուն 18
Ծնեգավայրս 19
Երևան 21
Նահանջով դարեր 22
Վերադարձի գազել 24

Հայրենի գարունեն ներս

Հարգեր եմ, տես 27
Հայրենի հող 28
Հեռություն 29
Երբ զիս գտար 30
Հայրենական 31
Հայաստանին գիշերը 32
Գարուն 33
Առաջին լույս 35
Վերջին արցունքը 36
Որպես նվեր 37
Փողոցներ ու պատեր 39
Հին եղանակ 41
Հայկեպ քաղաքի ծառերուն 42

Արտասահման մնացած ընկերոջս 43
Պատգամը 45
Երևանի փողոցներուն մեջ 47
Լենինի արձանին առջև 48
Քանդվող հին տան մը առջև 49
Փորե՛, ընկեր 51
Առավոտներ Հայաստանի 53
Անդրանիկ Թերզյանին հետ 55
Առաջին նոր տարին 57
Ջյուն 58
Մոսկվա 60
Վաղվան համար 61

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

Պատ. խմբագիր՝ Ա. ՀԱՅՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՍՖ 01113 Պատվեր № 839, Տիրաժ 3000
Տպագրական 4 մամուլ։
Ստորագրված է տպագրության 5—III—49 թ.

Պոլիգրաֆ և Հրատ. Վարչության
№ 2 տպարան, Երևան, Կնունյանց № 86

ՀԱ 6 2703

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220026925

ԳԻՆԸ 2 Ռ.

A II 26925